

**ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ  
2016թ. ՄԱՐՏԻ 24-Ի ՆԻՍՏԻ N 2-03/16ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Արձանագրություն N2-03/16**

**Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի**

**2016թ.-ի մարտի 24-ի նիստի**

Ներկա էին՝ Թոքմաջյան Հ.Վ.(տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա.(կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ. դոցենտ), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա., Ծատրյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ.:

**ՕՐԱԿԱՐԳ**

1.Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 2016-2017 ուստարվա մասնագիտությունների ուսման վարձավճարների չափերի մասին.

**Լսեցին** 1-Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար՝ Հ.Վ. Թոքմաջյանի տեղեկավորությունը 2016-2017 ուստարվա մասնագիտությունների ուսման վարձավճարների չափերի մասին: Ձեկուցողը նշեց, որ ելնելով ուսման տևողությունից և ուսուցման ծախսատարությունից հեռակա ուսուցման համակարգում ուսման վարձավճարները պետք է ցածր լինեն առկայի համեմատությամբ:

**Արտահայտվեցին** Ա.Ա. Գուլյան, Ս.Բ. Գալստյան: Հավանություն տալով զեկուցողի առաջարկին, նշեցին նաև որ ուսման վարձավճարի մեծ չափով նվազեցումը կբերի առկա ուսուցման համակարգից հեռակա ուսուցման համակարգ առանց այն էլ մեծ չափերի հասնող ուսանողների տեղաշարժի:

**Որոշեցին** 1.1-Հիմք ընդունելով ռեկտորի պաշտոնակատար՝ Հ.Վ. Թոքմաջյանի տեղեկատվությունը և արտահայտվողների առաջարկը առկայից հեռակա ուսուցման համակարգ ուսանողների հոսքը կարգավորելու նպատակով հեռակա ուսուցման վարձավճարները նվազեցնել 5%-ի չափով:

1.2-Շուշիի տեխնոլոգիական համալսարանի 2016-2017 ուստարվա մասնագիտությունների ուսման վարձավճարների չափերը ներկայացնել ԼՂՀ ԿԳ և սպորտի նախարարության համաձայնեցմանը (ցանկը կցվում է):

**Նախագահ՝** ստորագրություն Հ.Վ. Թոքմաջյան

**Քարտուղար՝** ստորագրություն Ա.Ա. Առաքելյան